

Սովի ձգածամբ

Չիմբայ (Ամու-Դարեայի շրջ.), 25 ապ. Չիմբայի և շրջակայքի ժողովուրդը տառապում է սովի ճիւղաններում: Մարդիկ անասունի պէս կոտորվում են քաղցից: Աղքատներին թիւ ու համար չը կայ. փողոցները լցված են աղքատներով: Մի ակա- նատես պատմում է հետևեալը:

Ամիս 18-ին՝ քաղաքից տասն վերստ հեռաւորութեան վրա մի աղքատ կին իր երեք փոքր զաւակներին շալակած քաղաք էր բերում, որպէսզի մուրացկանութեամբ պահէ: Քաղցած կինը, չը կարողանալով իր երեք զաւակներին շալակած հասցնել քաղաք, մտնում է մի շրճորի, իր երկու հարազատ զաւակներին նետում է մէջը, իսկ երրորդին բերում: Նմանօրինակ դէպ- քեր պատահել են մի քանի անգամ: Աղ- քատները ձմեռվայ ցուրտ եղանակներին կոտորվում էին փողոցներում սովից ու ցրտից: Սարսափելի կը լինէր Չիմբայի և շրջակայքի ժողովուրդի դրութիւնը, եթէ այս վերջերս չը բաժանէին պետական դան- ձարանից բաց թողած 146,000 ռ.:

Պատմում են, որ քաղաքից հեռու աուլ- ներում դարադաւիտղ ցեղերը կերակրվում են հողից հանած մի ինչ-որ բոյսի արմա- տով, որը երում են և ուտում:

Սղանակները մեզանում անձրևային են: Վար ու ցանքսը լաւ է: Այս տարի Չիմբայի շուրը, համեմատած անցեալ տարիներին, թէ իր ժամանակից շուտ է եկել և թէ ա- ուստ է. քաղաքի մէջի առուն լիքն է շրով: Ժողովուրդը մեծ յոյսերով է սպասում ա- պագայ հունձին: Միհման

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԻ 1500. ԱՄԵԱԿԻ ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400-ԱՄԵԱԿԻ 80- ԲԵԼԵԱՆԸ

Վաղարշապատ, 12 մայիսի

Փետրվարի 21-ին ձեմարանի մանկավար- Ժական ժողովի խորհրդակցութեան նիւթ է դարձել հայ տպագրութեան 400-ամեակը և տառերի գիւտի 1500-ամեակը միասին տո- նելը: Մանկավարժական խորհուրդը միան- զամայն նպատակաբար է գտել այդ եր- կուսը միասին տօնել և մեծ յօբեկանին տալ համազգային ընդթէ և տօնել ս. Թարգ- մանչաց տօնին սոյն թւի հոկտեմբերի 13-ին:

Այս մասին ձեմարանի հայր տեսուչը տա- լիս է գեկուցում Նորին Վեհափառութեանը մարտի 6-ին: Վեհափառ յանձնարարում է մանկավարժական ժողովին մանրամասնա- բար որոշել, ձևակերպել և խմբագրել այն բոլոր առաջարկութիւնները, որոնք ցանկա- լի էին համարվում 400-ամեակը յաւեր- ժացնելու համար: Ընտրվում է մանկա- վարժական ժողովից մի յատուկ յանձնաժո- ղով, որի անդամներն են՝ Արեղեան, Կանայ- եան, Ալթունեան, Տօշեան և Աբրահամեան:

Ծանձնաժողովի մշակած ցանկութիւննե- րը գնում են մանկավարժական ժողովը, որտեղ ընդհանուր առամբ հաստատվում են: Ապա հ. տեսուչը իր յայտարարութիւ- նով ներկայացնում է Նորին Վեհափառու- թեան:

Վեհափառ Կաթողիկոսը ապրիլի 25-ին յատուկ կօնդակով կազմում է յօբեկանա- կան կենտրոնական յանձնաժողով հետևեալ անձնաւորութիւններէ. միաբանութիւնից՝ Մեսրոպ եպ., Բաղբատ, Մատթէոս, Բար- գէն, Գարեգին և Ներսէս վարդապետներից, Գալուստ Տէր-Մկրտչեանից և ձեմարանի հետեկու ուսուցիչներից՝ Արեղեան, Կա- նայեան, Ալթունեան, Աբրահամեան և Էդի- լեան, և յանձնարարում է կազմել վերջ- նական ծրագիր հայ տպագրութեան 400-ա- մեակը յաւերժացնելու համար: Կենտրոնա- կան յանձնաժողովը (նախագահ Գալուստ

Տէր-Մկրտչեան, քարտուղար Գ. Ալթու- նեան) ունենում են Յնխտ—ապրիլի 27-ին, մայիսի 1-ին և 3-ին—և իր մշակած նախագիծը ներկայացնում է Նորին Վեհափառութեանը, որը, նկատի ունենալով յօբեկանական յանձ- նաժողովի և Գեորգեան ձեմարանի մանկա- վարժական խորհրդի յայտնած կարծիքները և ցանկութիւնները, կարգադրում և հաս- տատում է՝

ա) Միացնել հայ տպագրութեան 400- ամեայ յօբեկանի հանդէսը տառերի գիւտի 1500-ամեակի հետ և կատարել այդ մեծ յօբեկանը այս տարի հոկտեմբերի 13-ին ս. Թարգմանչաց տօնին:

բ) Հիմնել դպրոցական ֆօնդ մեր հոգևոր և եկեղեցական-ծխական դպրոցների բար- զաւանձման և բազմացման համար:

գ) Էլմիամծնի մատենադարանի կարևոր ձեռագիրները պարբերաբար հրատարակել: դ) Մեծ յօբեկանի առիթով հրատարա- կել մի գիտական ժողովածու:

ե) Հրատարակել հանրամատչելի գրքոյի համաձայն յօբեկանական յանձնաժողովի 3-րդ արձանագրութեան 3-րդ յօդուածի և ցրել բոլոր դպրոցների աշակերտներին և ժողովուրդի շրջանում ձրի:

Ծանձնաժողովը, համաձայն Վեհափառ Կաթողիկոսի վերոյիշեալ կօնդակի, աշխա- տում է ի կատար ածել կօնդակի կէտերը: Վահան ք. Աղազադեան

ԴԱՐՁԵԱԿ ՍԻՍՒԱՆԻ ԸՆԴՆԱՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ

«Մշակի» № 95-ի «Ներքին լուրերի» բաժնում հաղորդել էինք, որ Սիսիանից մեր ստացած տեղեկութեան համաձայն՝ այդ շրջանի հայաբնակ երկու գիւղերը— Մազրա և Շաղաթ—միջև ապրիլի 27-ին տեղի է ունեցել մի ընդհարում, որի միջո- ցին վերաբերել են շաղաթեցիներին կող- մից 24, իսկ մազրացիներին կողմից 4 հոգի: Մեր թերթի հետեալ համարում (№ 96) մենք արդէն հրատարակեցինք մեր ստա- ցած թղթակցութիւնը, որի մէջ թղթակից թաթուր խնդրին աւելի մանրամասնօրէն է նկարագրում, ցոյց տալով որ այդ զըժ- բարդ դէպքը պատահել է մի վիճելի հողի պատճառով:

Շաղաթից և Գորիսից այդ տխուր ընդ- հարման առիթով գրված մի քանի նամակ- ներից ներկայումս տեղեկանում ենք, որ վիճելի հողը, որը յիշեալ երկու գիւղերին պատկանող և իբր շոշափող հողերի սահ- մանում չէ գտնվում— ինչպէս ասված էր «Մը- շակի» № 96-ի թղթակցութեան մէջ—այլ մի ուրիշ տեղ, սկզբից պատկանելիս է ե- ղի Շաղաթ գիւղին:

Այդ նոր հողամասի վերաբերմամբ դեռ 1888 թւից վէճ է ծագել շաղաթեցիներին և թուրք քօչուրներին միջև ու բանն այն- տեղ է հասել, որ նրանց միջև 4—5 ան- զամ ընդհարումներ են տեղի ունեցել, ո- ռոնք առանց մարդկային զոհերի չեն ան- ցել: Յետագայում բանը հասնում է երևանի նահանգական վարչութեան պատշաճաւոր ատեսաններին, որոնք 1891 թւին վճռում են խնդրը յօդուտ շաղաթեցիներին, որոնք և այդ թւից սկսած՝ վարում են յիշեալ հո- ղը:

Բայց վերջին երեք տարին մազրացիք ձեռնամուխ են եղել յիշեալ հողամասին և խնդրը վիճելի դարձրել: Այս վերջինները երկու անգամ վարել-ցանել են այդ հողը, բայց շաղաթեցիք, իբրան հերթին, փչա- ցրել են, միաժամանակ գիւմելով պատշաճաւոր իշխանութեանը, որը ամեն անգամ հաստա- տել է շաղաթեցիներին՝ այդ հողամասի վրա ունեցած անվիճելի իրաւունքը:

Սե այդպէս, ապրիլի 27-ին, երբ շաղա- թեցիները հերկելիս են եղել յիշեալ հողա- մասը, մազրացիք յանկարծ 70—80 մարդ-